ԱԿՈ/0056/01/15

ԴԱՏԱՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«4» դեկտեմբերի 2015թ. ք. Եղեգնաձոր

Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան),

նախագահությամբ՝ դատավոր Ռ. Մխիթարյանի,
քարտուղարությամբ՝ Ա.Սիմոնյանի,
մասնակցությամբ՝

մեղադրող Կ. Կարապետյանի,
տուժողի ներկայացուցիչ Ն. Մաղաքյանի,
պաշտպան Ն. Բաղդասարյանի,
ամբաստանյալ Ս. Աբրահամյանի,

դռնբաց դատական նիստում, քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի **Սամվել Գառնիկի Աբրահամյանի** *(ծնվ. 07.01.1959թ. ՀՀ-ում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, նախկինում չդատված, աշխատել է «Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, հասցեն՝ Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ 8-րդ փող. թիվ 9 տուն)՝* յոթ դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

ՊԱՐԶԵՑ

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ադամյանի 2015 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 21100315 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2015 թվականի փետրվարի 9-ին, ժամը 15^{00}-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է Սամվել Գառնիկի Աբրահամյանը:

2015 թվականի փետրվարի 12-ին Սամվել Գառնիկի Աբրահամյանը մեղադրյալ է արձակվել արգելանքից և նույն օրը, որպես կասկածյալի՝ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Հաջորդ օրը՝ 2015 թվականի փետրվարի 13-ին, Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ. Կարապետյանի կողմից որոշում է կայացվել Սամվել Գառնիկի Աբրահամյանի պաշտոնավարումը՝ որպես «Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի, ժամանակավոր դադարեցնելու մասին:

2015 թվականի փետրվարի 19-ին Սամվել Գառնիկի Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Քննիչի 2015 թվականի մարտի 9-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Վայոց ձորի մարզպետարանի, գործով ճանաչվել է տուժող, իսկ 2015 թվականի մարտի 20-ի որոշմամբ՝ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանը ճանաչվել է տուժողի ներկայացուցիչ:

2015 թվականի մարտի 25-ին քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության քննիչ Ա. Հարությունյանի, իսկ 2015 թվականի ապրիլի 9-ին՝ նույն քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Հ. Պողոսյանի վարույթ:

2015 թվականի ապրիլի 3-ին Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ.Կարապետյանը քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացրել է մինչև 2015 թվականի հունիսի 6-ը:

Սամվել Գառնիկի Աբրահամյանին առաջադրված մեղադրանքը 2015 թվականի մայիսի 21-ին լրացվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ.Կարապետյանը 2015 թվականի հունիսի 3-ին քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացրել է ևս երկու ամսով, իսկ 2015 թվականի օգոստոսի 4-ին՝ մեկ ամսով՝ մինչև 2015 թվականի սեպտեմբերի 6-ը:

2. Սամվել Գառնիկի Աբրահամյանին առաջադրված մեղադրանքը 2015 թվականի օգոստոսի 29-ին լրացվել և նույն օրը նրան նոր մեղադրանք է առաջադրվել յոթ դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ մեղադրանքի փաստական կողմի հետևյալ նկարագրությամբ.

«[Սամվել Գառնիկի Աբրահամյանը] 2011 թվականի դեկտեմբերի 5-ից աշխատելով որպես «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և հանդիսանալով պաշտոնատար անձ, օժտված լինելով կազմակերպչական-տնօրինչական լիազորություններով՝ իրավասու լինելով խորհրդի հաստատմանը ներկայացնելու դպրոցի հաստիքացուցակը, իրականացնելու մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, նրանց աշխատանքի ընդունումը և աշխատանքային պայմանագրի լուծումը, վերահսկողություն իրականացնելու հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովելու ներքին աշխատանքային կարգապահության կանոնների պահպանումը, ապահովելու բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ և նպատակով, շահադիտական նպատակներով օգտագործելով իր պաշտոնական դիրքը, ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթղթեր կազմելով՝ կատարել է զգալի չափերի յուրացում և վատնում:

Այսպես.

«Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանը, յուրացման եղանակով ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ և նպատակով, օգտագործելով իր պաշտոնական դիրքը, 2013թ. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և

դեկտեմբեր ամիսներին նշված ուսումնական հաստատության հավաքարարներ Գայանե Բենյամինյանի և Վազգանուշ Պողոսյանի աշխատավարձերին հավելագրել է ամսական 22.275 << դրամ գումար՝ ընդհանուր 178.200 << դրամ գումար, այդ գումարից 176.000 դրամ գումարը պահանջել ու ստացել է Գայանե Բենյամինյանից և Վազգանուշ Պողոսյանից, տնօրինել է անձամբ՝ պետությանը պատճառելով զգալի չափերի հասնող նյութական վնաս:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից յուրացրել է զգալի չափերի հասնող 176.000 << դրամ գումար:

Բացի այդ, «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանն ուրիշի գույքի վատնում կատարելու դիտավորությամբ և նպատակով կրտսեր որդու՝ Արման Գևորգյանի կնոջը՝ Լիլիթ Հակոբյանին, ով «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ում ժամանակավորապես փոխարինել և աշխատել է մանկական կոլեկտիվի կազմակերպիչ, 2014 թվականի նոյեմբերի 1-ին թիվ 31 հրամանով հրամանագրել է նշված ուսումնական հաստատության դռնապահ և 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2015թ. փետրվարի 13-ը ներառյալ ժամանակահատվածում, վերջինիս կողմից որպես դռնապահ աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և իր ստորագրությամբ հաստատել է «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակները, ինչպես նաև հաշվետախտակները, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Լիլիթ Հակոբյանի տվյալները, որպես դռնապահ աշխատանքային պարտականությունները կատարած անձի, որի արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկվել և դուրս է գրվել զգալի չափի՝ 169.491 << դրամ գումար, որը տնօրինվել է Լիլիթ Հակոբյանի կողմից:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից վատնել է զգալի չափերի հասնող 169.491 << դրամ գումար:

Բացի այդ, «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանն ուրիշի գույքի վատնում կատարելու դիտավորությամբ և նպատակով ավագ որդուն՝ Ռոման Գևորգյանին 2012 թվականի հունվարի 3-ին իր թիվ 47 հրամանով մինչև 2014թ. հունվարի 8-ը ներառյալ ժամանակահատվածում հրամանագրել է որպես նշված ուսումնական հաստատության սպասարկող բանվոր, սակայն վերջինիս կողմից 2013 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև աշխատանքից ազատվելը՝ հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին աշխատանքի չներկայանալու և աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և իր ստորագրությամբ հաստատել է «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակները, ինչպես նաև հաշվետախտակները, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Ռոման

Գևորգյանի տվյալները, որպես աշխատանքի հաճախած և աշխատանքային պարտականությունները կատարած անձի, որի արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկվել և դուրս է գրվել զգալի չափի՝ 133.650 << դրամ գումար, որը օգտագործվել է Ռոման Գևորգյանի կողմից:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից վատնել է զգալի չափերի հասնող 133.650 << դրամ գումար:

Բացի այդ, «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանն ուրիշի գույքի վատնում կատարելու դիտավորությամբ և նպատակով կրտսեր որդուն՝ Արման Գևորգյանին 2014 թվականի հունվարի 8-ին իր թիվ 32 հրամանով հրամանագրել է որպես նշված ուսումնական հաստատության սպասարկող բանվոր և 2014 թվականի փետրվարի 10-ից մինչև 2014թ. հուլիսի 31-ը ներառյալ ժամանակահատվածում, վերջինիս աշխատանքի չներկայանալու և աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և իր ստորագրությամբ հաստատել է «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակները, ինչպես նաև հաշվետախտակները, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Արման Գևորգյանի տվյալները, որպես սպասարկող բանվոր աշխատանքի հաճախած և աշխատանքային պարտականությունները կատարած անձի, որի արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկվել և դուրս է գրվել զգալի չափի՝ 319.246 << դրամ գումար, որը ստացել և տնօրինվել է Արման Գևորգյանի կողմից:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից վատնել է զգալի չափերի հասնող 319.246 << դրամ գումար:

Բացի այդ, «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանն ուրիշի գույքի վատնում կատարելու դիտավորությամբ և նպատակով դպրոցի նախկին հավաքարար Մայրանուշ Ասլանյանի անվամբ, վերջինիս կողմից Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու պատճառով 2013թ. հուլիսի 30-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ ժամանակահատվածում աշխատանքի չներկայանալու և աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և իր ստորագրությամբ հաստատել է «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակները, ինչպես նաև հաշվետախտակները, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Մայրանուշ Ասլանյանի տվյալները, որպես դպրոցի հավաքարար աշխատանքի հաճախած և աշխատանքային պարտականությունները կատարած անձի, որի արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկվել և դուրս է գրվել զգալի չափի՝ 48.420 << դրամ գումար, որը ստացել և տնօրինվել է Մայրանուշ Ասլանյանի կողմից:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից վատնել է զգալի չափերի հասնող 48.420 << դրամ գումար:

Բացի այդ, «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանն ուրիշի գույքի վատնում կատարելու դիտավորությամբ և նպատակով դպրոցի «Ֆիզիկական պատրաստություն» առարկայի ուսուցիչ Դավիթ Դավթյանին 2014 թվականի հոկտեմբերի 1-ին թիվ 30 հրամանով, 0.25 միավոր դրույքաչափով հրամանագրել է որպես նշված ուսումնական հաստատության գիշերային պահակ, սակայն վերջինիս կողմից Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու պատճառով 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում աշխատանքի չներկայանալու և աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և ստորագրությամբ հաստատել է «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակները, ինչպես նաև հաշվետախտակները, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Դավիթ Դավթյանի տվյալները, որպես դպրոցի գիշերային պահակ աշխատանքի հաճախած և աշխատանքային պարտականությունները կատարած անձի, որի արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկվել և դուրս է գրվել զգալի չափի՝ 30.046 << դրամ գումար, որը ստացել և տնօրինվել է Դավիթ Դավթյանի կողմից:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից վատնել է զգալի չափերի հասնող 30.046 << դրամ գումար:

Բացի այդ, «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Աբրահամյանն ուրիշի գույքի վատնում կատարելու դիտավորությամբ և նպատակով դպրոցի «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցչուհի և դպրոցի համակարգչային օպերատոր Կիմա Հովհաննիսյանին 2014 թվականի հունվարի 8-ին թիվ 41 հրամանով, 0.5 միավոր դրույքաչափով հրամանագրել է որպես նշված ուսումնական հաստատության գրադարանավար, սակայն Կիմա Հովհաննիսյանը մինչև 2015 թվականի փետրվարի 13-ը ներառյալ ժամանակահատվածում, երբ դադարեցվել է Սամվել Աբրահամյանի դպրոցի տնօրենի պաշտոնավարությունը, Կիմա Հովհաննիսյանի կողմից որպես գրադարանավար աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և իր ստորագրությամբ հաստատել է «Վայոց Ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակները, ինչպես նաև հաշվետախտակները, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Կիմա Հովհաննիսյանի տվյալները, որպես գրադարանավար աշխատանքային պարտականությունները կատարած անձի, որի արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկվել և դուրս է գրվել զգալի չափի՝ 285.000 << դրամ գումար, որը ստացել և տնօրինվել է Կիմա Հովհաննիսյանի կողմից:

Այսինքն, Սամվել Աբրահամյանին մեղսագրվում է << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք, որը կայանում է նրանում, որ նա պաշտոնեական դիրքն օգտագործելով իրեն վստահված միջոցներից վատնել է զգալի չափերի հասնող 285.000 << դրամ գումար»:

3. 2015 թվականի սեպտեմբերի 2-ին հայտարարվել է գործով նախաքննության ավարտը, 2015 թվականի սեպտեմբերի 24-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, որը հաստատվել է Վայոց Ձորի մարզի դատախազության դատախազ Կ.Կարապետյանի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ:

Ընդ որում, մեղադրական եզրակացությունը հաստատելիս՝ դատախազ Կ. Կարապետյանն առարկել է դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ:

Քրեական գործը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, 2015 թվականի սեպտեմբերի 30-ին ուղարկվել է Դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

<u>Դատական քննության արագացված կարգի կիրառումը.</u>

4. Մինչ դատաքննությունը սկսելն ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանը միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով, միաժամանակ հայտարարելով, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու բնույթն ու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ և հասկանալի է, դրա հետ համաձայն է, ընդունում է ամբողջ ծավալով և զղջում է կատարածի համար:

Մեղադրող Կ. Կարապետյանը դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալի միջնորդության դեմ չի առարկել՝ փոխելով մեղադրական եզրակացությունը հաստատելիս դրսևորած իր դիրքորոշումը:

Դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ չի առարկել նաև գործով տուժողի ներկայացուցիչը:

Դատարանը, համոզվելով, որ առկա են << քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ և 375.2-րդ հոդվածներով նախատեսված հիմքերն ու պայմանները, որոշում է կայացրել դատական քննությունն արագացված կարգով անցկացնելու մասին:

Դատական վիճաբանությունների փուլում գործով մեղադրող Կ. Կարապետյանի կողմից ընդդեմ ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի հարուցվել է քաղաքացիական հայց՝ պետությանը պատճառված 1.161.853 << դրամ ընդհանուր չափով վնասի չվերականգնված մասի՝ 160.853 << դրամ գումարի բռնագանձման պահանջով: Սակայն, ամբաստանյալի վերջին խոսքից առաջ պաշտպանության կողմը ներկայացրել է << պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին 161.000 << դրամի վճարման վերաբերյալ անդորրագիր, որը տուժողի ներկայացուցչի և մեղադրողի կողմից գնահատելուց հետո, մեղադրանքի կողմը հանդես է եկել հարուցված քաղաքացիական հայցից հրաժարվելու մասին հայտարարությամբ՝ պետությանը պատճառված գույքային վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հիմնավորմամբ:

<u>Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.</u>

5. Դատարանը, գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր հարգով սահմանված հետազոտություն չկատարելով, հիմք ընդունելով մեղադրանքը ամբողջ ծավալով ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի կողմից կամովին ու գիտակցաբար ընդունելու և դրա հետ համաձայն լինելու փաստերը, հանգում է այն

հետևության, որ նա կատարել է սույն դատավճռի 2-րդ կետում արձանագրված՝ իրեն մեղսագրվող արարքները, այդ թվում.

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 176.000 << դրամի յուրացում (այսուհետ՝ առաջին դրվագ), այդ արարքը << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը << քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը,

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 169.491 << դրամի վատնում (այսուհետ՝ երկրորդ դրվագ), այդ արարքը << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը << քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը,

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 133.650 << դրամի վատնում (այսուհետ՝ երրորդ դրվագ), այդ արարքը << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը << քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը,

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 319.246 << դրամի վատնում (այսուհետ՝ չորրորդ դրվագ), այդ արարքը << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը << քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը,

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 48.420 << դրամի վատնում (այսուհետ՝ հինգերորդ դրվագ), այդ արարքը << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը << քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը,

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 30.046 << դրամի վատնում (այսուհետ՝ վեցերորդ դրվագ), այդ արարքը << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը << քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը,

- պաշտոնեական դիրքն օգտագործելով 285.000 ՀՀ դրամի վատնում (այսուհետ՝ յոթերորդ դրվագ), այդ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որակված է ճիշտ, այն ամբաստանյալի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ չի կարող գերազանցել նշված հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը:

6. Հետազոտելով ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի անձը բնութագրող, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները՝ Դատարանն արձանագրում է հետևյալը.

- ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի 2015 թվականի փետրվարի 6-ի տեղեկանքի համաձայն՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանը նախկինում դատապարտված կամ որևէ կերպ արատավորված չի եղել,

(հատոր 1-ին գ.թ. 25)

- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Վայք մասնաճյուղի 2015 թվականի փետրվարի 12-ի թիվ 150212008340035, «Արդշինբանկ» ՓԲ ընկերության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 151022019752058, «Արդշինբանկ» ՓԲ ընկերության 2015 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 151116042692058 և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Վայք մասնաճյուղի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 151204024966035 անդորրագրերի համաձայն՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանի կողմից ՀՀ պետական բյուջեի թիվ 900005028155 հաշվեհամարին՝ որպես պետությանը պատճառված վնասի փոխհատուցում, ընդհանուր առմամբ վճարվել է 1.162.000 ՀՀ դրամ,

(հատոր 1-ին, գ.թ. 72.1 , հատոր 5-րդ գ.թ. 187-188, 211)

- Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի կողմից տրված բնութագրի համաձայն՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանը 1994 թվականից աշխատում է Զառիթափ համայնքի միջնակարգ դպրոցում, այդ թվում՝ 1994 թվականից մինչև 1995 թվականն աշխատել է որպես ուսուցիչ, 1995 թվականից մինչև 2005 թվականը՝ որպես տնօրեն, 2005 թվականից մինչև 2011 թվականը՝ որպես ուսուցիչ, 2011 թվականից մինչև 2015 թվականը՝ որպես տնօրեն, 2015 թվականի փետրվարի 13-ից՝ դարձյալ որպես ուսուցիչ: Բնութագրվում է որպես հմուտ մասնագետի, կոլեկտիվի հարգանքը վայելող, առաքինի և պարկեշտ անձնավորության:

(հատոր 5-րդ գ.թ. 178-179)

- Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավարի կողմից տրված բնութագրի համաձայն՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանը բնութագրվում է որպես հասարակության հարգանքը վայելող ազնիվ անձնավորության:

(հատոր 5-րդ գ.թ. 180)

- Զառիթափի գյուղխորհրդի կողմից 1984 թվականի դեկտեմբերի 27-ին տրված թիվ 281771 ամուսնության վկայականի լուսապատճենի համաձայն՝ 1984 թվականի դեկտեմբերի 27-ին գրանցվել է Սամվել Գառնիկի Աբրահամյանի և Կարինե Զավենի Ալեքսանյանի ամուսնությունը,

(հատոր 5-րդ գ.թ. 186)

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մշտական հանձնաժողովի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության 2015 թվականի փետրվարի 11-ի բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1146275 որոշման լուսապատճենի համաձայն՝ Կարինե Զավենի Ալեքսանյանը հանդիսանում է երրորդ խմբի հաշմանդամ,

(հատոր 5-րդ գ.թ. 181)

- ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության 2015 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 7905 տեղեկանքի, թիվ 7905/245 էպիկրիզի և թիվ 267707 անաշխատունակության թերթիկի լուսապատճենների համաձայն՝ Կարինե Զավենի Ալեքսանյանի մոտ ախտորոշվել է «Ձախ կրծքագեղձի օջախային գեղձային-կիստոզ մաստատաթիա», որն ուղեկցվում է մի շարք այլ հիվանդություններով, այդ թվում նաև՝ շաքարային դիաբետով:

(հատոր 5-րդ գ.թ. 182-185)

<u>Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումը.</u>

7. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ցանկը, որում ներառված է նաև հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին հատուցելը կամ վերացնելը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված այլ գործողությունները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն այդ հոդվածի առաջին մասում:

Դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշներին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Պ.Բայրամյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են. ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը, բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները (տե՛ս Պարույր Բայրամյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

8. Սույն դատավճռի նախորդ կետում շարադրված իրավադրույթները և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը կիրառելով սույն դատավճռի 6-րդ կետում արձանագրված փաստական տվյալների նկատմամբ՝ Դատարանը, որպես ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, մեղադրանքի բոլոր դրվագներում հիշատակ է առնում հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին հատուցելը, ինչպես նաև մեղքն ընդունելու և կատարածի համար զղջալու համակցությունը: Դատարանը փաստում է, որ ամբաստանյալի կողմից մեղքն ընդունելը, կատարածի համար զղջալը և հանցագործությամբ պատճառված վնասը հարթելու

ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելը՝ որպես նրա հետհանցավոր դրական վարքագիծ, վկայում է այն մասին, որ նա գիտակցել է իր արարքների հանրային վտանգավորությունն ու զղջացել է դրա համար, որպիսի պարագայում քրեական պատժի նպատակների իրացումը, այդ թվում՝ պատժի ենթարկված անձին ուղղելու հավանականությունը, զգալիորեն բարձրանում է:

Միաժամանակ, որպես ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի անձը բնութագրող տվյալներ, Դատարանն արձանագրում է, որ 56 տարեկան է, ամուսնացած է ու կինը հանդիսանում է երրորդ խմբի հաշմանդամ, ստացել է բարձրագույն կրթություն և քսան տարուց ավելի զբաղվում է մանկավարժությամբ, նախկինում դատապարտված կամ որևէ կերպ արատավորված չի եղել, բնութագրվում է բացառապես դրականորեն:

Դատարանը նաև արձանագրում է, որ ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

9. << քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

<< քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

<< քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ն.Սարգսյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են, որոնցով պետք է ղեկավարվի դատարանը պատիժ նշանակելիս: Այդ սկզբունքներն են՝

ա) օրինականությունը,

բ) արդարությունը,

գ) պատժի անհատականացումը,

դ) մարդասիրությունը:

Պատիժ նշանակելու վերոնշյալ սկզբունքները սահմանում են [illegible] հիմնական դրույթները, որոնցով ղեկավարվում է դատարանը յուրաքանչյուր [illegible] քրեական գործով պատժի տեսակն ու չափն ընտրելիս:

(...) պատժի նշանակման իրավական շրջանակները սահմանվում են [illegible] քրեական օրենսգրքով: Դրա հետ մեկտեղ, սակայն, վերոնշյալ օրենքը դատարանին հնարավորություն է տվել որոշակի սկզբունքների (...) պահպանմամբ, իր ներքին

համոզմանը և իրավագիտակցությանը համապատասխան, ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր և Հատուկ մասերով նախատեսված սահմաններում որոշել պատժի տեսակն ու չափը: Այլ կերպ՝ ուրվագծելով կոնկրետ հանցանքի համար նշանակման ենթակա պատժի առավելագույն և նվազագույն սահմանները՝ ՀՀ քրեական օրենքը դատարանին տվել է այդ շրջանակում հայեցողություն դրսևորելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի գրեթե բոլոր հոդվածների սանկցիաներում ամրագրված վերոնշյալ մոտեցումը պայմանավորված է այն տրամաբանությամբ, որ քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Ուստի կոնկրետ արարքի և անձի նկատմամբ համընդհանուր քրեական օրենքով նախատեսված սանկցիան կիրառելիս դատարանը պետք է որոշակի հայեցողություն դրսևորի:

Վերոգրյալից Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ առանց դատարանի հայեցողության պատժի անհատականացումն անհնար է:

(...) Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների հայեցողական և ոչ երբեք կամային գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը):

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունը դասվում է սեփականության դեմ ուղղված դիտավորությամբ կատարվող միջին ծանրության հանցագործությունների շարքին: Ընդ որում, նշված իրավադրույթի սանկցիան այլընտրանքային է՝ այն պատիժ է նախատեսում տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկման ձևով՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Այլընտրանքային սանկցիաների միջև ճիշտ ընտրություն կատարելու և արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը գնահատելու հարցերին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ. Մադաթյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա:

(...) Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պաշտպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը,

հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը:

(...) Արարքի հանրային վտանգավորության բնույթի որոշման հարցում Վճռաբեկ դատարանը կարևորում է խախտված քրեաիրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, և գտնում է, որ պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել տվյալ ժամանակահատվածում քրեական օրենսդրությամբ պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը» (տե՛ս Գարուշ Նորիկի Մադաթյանի վերաբերյալ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇՊ/0029/01/08 որոշումը):

10. Սույն դատավճռի նախորդ կետում շարադրված իրավադրույթների, դրանց վերլուծության արդյունքում ձևավորված դատողությունների և << վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի կատարած հանցագործություններից յուրաքանչյուրի բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, այդ թվում՝ նրա կատարած կոնկրետ արարքները, դրանցից յուրաքանչյուրով՝ հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, դրա արդյունքում պատճառված վնասը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, հանցանքը կատարելուց հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, դրանք համադրելով սույն դատավճռի 8-րդ կետում արձանագրված՝ նրա անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հետ՝ Դատարանը հանգում է այն հետևության, որ թեև Սամվել Գառնիկի Աբրահամյանի հետհանցավոր դրական վարքագիծը, հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքը և ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները համակցության մեջ հիմք են տալիս հանգելու այն հետևության, որ նրա նկատմամբ << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակի՝ տուգանքի կիրառման միջոցով ևս հնարավոր է հասնել << քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակներից՝ սոցիալական արդարության վերականգնմանը և պատժի ենթարկվող անձի ուղղմանը: Սակայն, այդ պատժատեսակի կիրառման, ինչպես նաև առանց տվյալ հանցագործության համար նախատեսված հայեցողական լրացուցիչ պատժի կիրառման ազատազրկման ձևով պատիժ նշանակելու միջոցով հնարավոր չէ ապահովել պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձանց մասնակցությամբ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում պետության քրեական քաղաքականության իրացվելիությունը և հասնել << քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի մյուս նպատակին՝ հիշյալ սուբյեկտների մասնակցությամբ նմանօրինակ հանցագործությունների կանխմանը:

Արդյունքում՝ Դատարանը հանգում է այն հետևության, որ բոլոր յոթ դրվագներով էլ Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու

իրավունքի զրկմամբ, այդ թվում՝ առաջին դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 176.000 << դրամի յուրացում կատարելու համար նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, երկրորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 169.491 << դրամի վատնում կատարելու համար ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, երրորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 133.650 << դրամի վատնում կատարելու համար ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, չորրորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 319.246 << դրամի վատնում կատարելու համար ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, հինգերորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 48.420 << դրամի վատնում կատարելու համար ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, վեցերորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 30.046 << դրամի վատնում կատարելու համար ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով և յոթերորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 285.000 << դրամի վատնում կատարելու համար ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով:

Դատարանը նաև գտնում է, որ << քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ նշանակված հիմնական և լրացուցիչ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ առաջին դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատիժներին համապատասխանաբար պետք է գումարել երկրորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, երրորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, չորրորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, հինգերորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 3/երեք/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, վեցերորդ դրվագով նշանակված 2

/երկու/ տարի ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 3/երեք/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, յոթերորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը՝ վերջնական պատիժ սահմանելով ազատազրկում՝ 4/չորս/ տարի 9/ինը/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

Ընդ որում, լրացուցիչ պատժի վերջնական չափը որոշելիս՝ Դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ սահմանվում է մեկից երեք տարի ժամկետով, իսկ ըստ նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի՝ հանցանքների համակցությամբ նշանակված լրացուցիչ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում վերջնական լրացուցիչ պատիժը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված հիմնական պատժին պետք է հաշվակցել 2015 թվականի փետրվարի 9-ից մինչև 2015 թվականի փետրվարի 12-ն արգելանքի տակ պահվելու 3 /երեք/ օր ժամկետը և վերջնական պատիժ թողնել ազատազրկում՝ 4/չորս/ տարի 8 /ութ/ ամիս 27 /քսանյոթ/ օր ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

11. Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատիժը նրա կողմից կրելու նպատակահարմարության հարցին՝ Դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Մեջբերված քրեաիրավական դրույթները Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլ որոշումների (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇՊ/0029/01/08, ԱՎԴ2/0059/01/08, ԼԴ2/0019/01/09 որոշումները և այլն), [illegible]ության է ենթարկել *Դ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական [illegible] ձևավորել այն մասին, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց [illegible] պատիժ կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: [illegible] հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների [illegible]ության հիման վրա,

որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

(...) պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին» (տե՛ս Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0078/01/09 որոշումը):

Մեկ այլ՝ *Հ.Հարությունյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (տե՛ս Հազարապետ Ալբերտի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Ն.Սարգսյանի գործով կայացված որոշման մեջ զարգացնելով Հ.Հարությունյանի գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շատ դեպքերում պատժի տեսակի և չափի վրա ազդում են հանցավորի սեռը, տարիքը, առողջական վիճակը» (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը):

Հ.Հարությունյանի և Ն.Սարգսյանի գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը զարգացրել է *Ս.Սարգսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) «հանցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է և ներառում է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: ՀՀ գործող քրեական օրենսդրության իմաստով «հանցավորի անձնավորություն» եզրույթը դիտարկվում է որպես քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք, հանցավորի անձը բնութագրող առանձին հատկանիշները և

վարքագիծը օրենքում նախատեսված են որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև դատապարտյալին պատժից ազատելու նախապայման:

(...) պատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ:

(...) հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող սահմանափակվել միայն անձի բարոյական հատկանիշներով և ներառում են նաև անձի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, կրթությունը, նրա դրական կամ բացասական բնութագիրը, խրախուսանքների կամ տույժերի առկայությունը և այլն» (տե՛ս Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշումը):

Ս.Աղախանյանի գործով կայացրած որոշման մեջ վերահաստատելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ. «(...) **յուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը** լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցագործության կատարման եղանակ և այլն), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները» (տես՝ Սեյրան Աղախանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշումը):

Շարադրվածի լույսի ներքո գնահատելով սույն դատավճռի 8-10-րդ կետերում արձանագրված փաստական տվյալներն ու դրանց վերլուծության արդյունքում արված դատողությունները՝ Դատարանը հանգում է այն հետևության, որ Սամվել Գառնիկի Աբրահամյանի ուղղվելը հնարավոր է առանց ազատազրկման ձևով նշանակվող հիմնական պատիժը նրա կողմից ռեալ կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթների կիրառման միջոցով:

Դատարանը նման հետևության է հանգում՝ հաշվի առնելով ինչպես ամբաստանյալ Սամվել Գառնիկի Աբրահամյանի կատարած հանցագործության բնույթը, հանրային վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, խնամքին վատառողջ և հաշմանդամ նրոջ առկայությունը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության փաստը և անձը բնութագրող տվյալները՝ մասնավորապես այն, որ նա քան տարուց ավելի է, ինչ զբաղվում է մանկավարժությամբ, բնութագրվում է բացառապես դրականորեն, այլևս պատկառելի տարիքում է և նախկինում դատապարտված կամ որևէ

կերպ արատավորված չի եղել, որպիսի հանգամանքների համակցությունն իր հերթին հիմք է տալիս ողջամիտ հետևություն անելու առ այն, որ հանցագործությունը բնորոշ չէ նրա անձին ու վերջինիս կենսագրության մեջ այդ երևույթը կրում է էպիզոդիկ բնույթ:

Դրա հետ մեկտեղ, Դատարանը նաև գտնում է, որ Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ պետք է սահմանել փորձաշրջան՝ վարքի նկատմամբ հսկողությունը դնելով ՀՀ ԱՆ ՔԿԿ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան տարածքային ստորաբաժանման վրա:

Ընդ որում, փորձաշրջանի համար Դատարանը բավարար ժամկետ է համարում երեք տարին և գտնում է, որ Սամվել Գառնիկի Աբրահամյանի վրա պետք է դնել պարտավորություն՝ փորձաշրջանի ընթացքում չփոխելու մշտական բնակության վայրը:

12. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-16-րդ կետերով նախատեսված՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա մյուս հարցերին՝ Դատարանն արձանագրում է, որ գործով մեղադրողի կողմից հարուցված քաղաքացիական հայցով վարույթը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ենթակա է կարճման՝ հանցագործությամբ պետությանը պատճառված գույքային վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու պատճառաբանությամբ հայցից հրաժարվելու հիմքով:

Դրա հետ մեկտեղ, Դատարանն արձանագրում է, որ ինչպես մինչդատական վարույթն իրականացրած մարմնի, այնպես էլ Դատարանի որոշմամբ, որպես հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցումն ապահովելու միջոց, արգելանք է դրվել Սամվել Գառնիկի Աբրահամյանի գույքի և դրամական միջոցների նկատմամբ, որպիսին պահպանելու իրավաչափ անհրաժեշտությունն այլևս բացակայում է՝ գույքային վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հիմքով: Ուստի, Սամվել Գառնիկի Աբրահամյանի գույքի և դրամական միջոցների վրա սույն քրեական գործի շրջանակներում դրված արգելանքը ենթակա է վերացման:

Դատարանը նաև արձանագրում է, որ մինչդատական վարույթն իրականացրած մարմնի կողմից առգրավվել և գործով իրեղեն ապացույց են ճանաչվել «Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի 2005-2015թ.թ. հրամանագրքերը, 2012-2015թ.թ. ֆինանսահաշվապահական փաստաթղթերի թղթապանակները, Լիլիթ Հակոբյանի, Մայրանուշ Ասլանյանի, Դավիթ Դավթյանի, Արման և Ռոման Գևորգյանների անձնական գործերը, որոնք կցվել են քրեական գործին:

Անդրադառնալով նշված իրեղեն ապացույցների տնօրինման հարցին՝ Դատարանը գտնում է, որ դրանք, սույն դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ պետք է վերադարձնել «Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությանը:

Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ կիրառված խնդրանման միջոցի հարցին՝ Դատարանը գտնում է, որ մինչև սույն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն այն պետք է թողնել անփոփոխ՝ դատական ակտի հնարավոր բողոքարկման դեպքում նրա դատավարական պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Դատարանը նաև գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական ծախսն այլևս բացակայում է, իսկ նշված հոդվածի նույն մասի 2-ից 8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերը, համաձայն ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 8-րդ մասի՝ ամբաստանյալից բռնագանձման ենթակա չեն:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ առկա չէ որևէ հիմք՝ ամբաստանյալի նկատմամբ հարկադիր բռնում կամ խնամակալություն նշանակելու համար, գործով բռնագանձման ենթակա գույք չկա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ, 365-րդ, 369-372-րդ, 375.3-375.4-րդ հոդվածներով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Տ՝

Սամվել Գառնիկի Աբրահամյանին ճանաչել մեղավոր յոթ դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ և նրա նկատմամբ պատիժ նշանակել.

- առաջին դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 176.000 ՀՀ դրամի յուրացում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով,
- երկրորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 169.491 ՀՀ դրամի վատնում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով,
- երրորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 133.650 ՀՀ դրամի վատնում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով,
- չորրորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 319.246 ՀՀ դրամի վատնում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով,
- հինգերորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 48.420 ՀՀ դրամի վատնում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով,
- վեցերորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 30.046 ՀՀ դրամի վատնում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով,
- յոթերորդ դրվագով՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով 285.000 ՀՀ դրամի վատնում կատարելու համար, ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 /մեկ/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ նշանակված հիմնական և լրացուցիչ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ առաջին դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով ազատազրկում

հիմնական և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատիժներին համապատասխանաբար գումարելով երկրորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, երրորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, չորրորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, հինգերորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 3/երեք/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, վեցերորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 3/երեք/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը, ինչպես նաև յոթերորդ դրվագով նշանակված 2 /երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկում հիմնական պատժի 6/վեց/ ամիսը և 1 /մեկ/ տարի ժամկետով վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկում լրացուցիչ պատժի 6/վեց/ ամիսը՝ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 4/չորս/ տարի 9/ինը/ ամիս ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

<< քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված հիմնական պատժին հաշվակցել 2015 թվականի փետրվարի 9-ից մինչև 2015 թվականի փետրվարի 12-ն արգելանքի տակ պահվելու 3 /երեք/ օր ժամկետը և վերջնական պատիժ թողնել ազատազրկում՝ 4/չորս/ տարի 8 /ութ/ ամիս 27 /քսանյոթ/ օր ժամկետով՝ վարչատնտեսական գործառույթներով օժտված պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

<< քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված հիմնական պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանել փորձաշրջան՝ 3/երեք/ տարի ժամկետով, վարքի նկատմամբ հսկողությունը դնելով << ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան տարածքային ստորաբաժանման վրա:

Սամվել Գառնիկի Աբրահամյանի վրա դնել պարտավորություն՝ փորձաշրջանի ընթացքում չփոխելու մշտական բնակության վայրը:

Սամվել Գառնիկի Աբրահամյանի նկատմամբ ընտրված [illegible]ելանքի մասին ստորագրություն խափանման միջոցը թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Գործով իրեղեն ապացույց ճանաչված՝ «Վայոց ձորի մարզի Հառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» [illegible] 2005-2015թ.թ. հրամանագրքերը, 2012-2015թ.թ. ֆինանսահաշվապահական փաստաթղթերի

թղթապանակները, Լիլիթ Հակոբյանի, Մայրանուշ Ասլանյանի, Դավիթ Դավթյանի, Արման և Ռոման Գևորգյանների անձնական գործերը վերադարձնել «Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությանը:

Գործով մեղադրողի կողմից հարուցված քաղաքացիական հայցով վարույթը կարճել՝ պետությանը պատճառված գույքային վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու պատճառով հայցից հրաժարվելու հիմքով, իսկ դատական մյուս ծախսերի հարցը՝ համարել լուծված:

Սույն քրեական գործով Սամվել Գառնիկի Աբրահամյանի գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը վերացնել:

Դատավճիռը, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի, կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՃՌՈՂ Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ծանոթություն - դատավճիռը չի բողոքարկվել, 2016 թվականի հունվարի 11-ին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ